ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 101

15 հոկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՊՈՄՊԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ,ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՈՇՈՐ ԵՎ ՄԱՆՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄՈՑԻՆ ԿԻՑ ՆՈՐ ԿՈՒՏԱԿԻՉ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՄԱՅԹԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քանի որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի խորքային պոմպը փչացել է և ունի հրատապ վերանորոգման կարիք /ամբողջ բնակավայրը ջրազրկված է/,Քարաբերդ բնակավայրի խոշոր և մանր անասունների համար խմոցի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացել է խնդիր գոյություն ունեցող հորատանցքին կից նոր կուտակիչ հոր կառուցելու(հորատանցքը մաքելու անհնարինության պատճառով), իսկ Մարալիկ քաղաքի Մադաթյան փողոցի երաժշտական դպրոցի դիմացի մայթի անցանելիությունը խնայված միջոցներով ապահովելու նպատակով նորոգելու հրատապությունը(հաշվի առնելով եղանակային պայմանները) և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի գ) ենթակետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի խորքային պոմպի վերանորոգման ծառայությունը, Քարաբերդ բնակավայրի խոշոր և մանր անասունների համար խմոցի նոր կուտակիչ հորի կառուցման աշխատանքները և Մարալիկ քաղաքի Մադաթյան փողոցի երաժշտական դպրոցի դիմացի մայթի նորոգման աշխատանքները կազմակերպել մեկ անձից գնման ընթացակարգով, որի գինը կարող է գերազանցել գնումների բազային միավորը՝ 1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ...8	Դեմ՝ ...0	Չեռնպահ՝ ...0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ	բացակա է		
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ	բացակա է		
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ	բացակա է		
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	բացակա է		
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ	բացակա է		
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ	բացակա է		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 15
Քաղաք Մարալիկ